

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 69/2

26 դեկտեմբերի 2017թ.

Քննարկվեց ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 16.11.2017թ. «ՎԻՄՊԵՐԳ» ՍՊԸ 02.10.2017թ. վարչական բողոքը բավարարելու վերաբերյալ որոշման պահանջները կատարելու հարցը՝ կապված բարենպաստ նոր վարչական ակտ կայացնելու հետ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Հանձնաժողովի 01.09.2017թ. նիստում քննության է առնվել «ՎԻՄՊԵՐԳ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն) գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության 03.07.2017թ. թիվ 035442 որոշման դեմ: Արդյունքում ընդունվել է 49/4 որոշումը, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության 03.07.2017թ. թիվ 035442 որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժվել:

Ընկերությունը համաձայն չլինելով Հանձնաժողովի 01.09.2017թ. թիվ 49/4 որոշման հետ, այն բողոքարկել է ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով:

Հանձնաժողովի 01.09.2017թ. թիվ 49/4 որոշման դեմ «ՎԻՄՊԵՐԳ» ՍՊԸ-ի կողմից բերված բողոքի քննության արդյունքում ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի կողմից 16.11.2017թ. կայացվել է թիվ 01/11 որոշումը, որի համաձայն «ՎԻՄՊԵՐԳ» ՍՊԸ-ի 02.10.2017թ. վարչական բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Հանձնաժողովի 01.09.2017թ. թիվ 49/4 որոշումը, ինչպես նաև պարտավորեցվել է Հանձնաժողովին կայացնել բարենպաստ նոր վարչական ակտ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 16.11.2017թ. թիվ 01/11 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության 03.07.2017թ. թիվ 035442 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ